

Նունե Զոմարդյան
*ԵՄՀ միջազգային կապերի և հեղինակությունների կենտրոնի
պատասխանատու, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն
ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ nune.jomardyan@eiu.am*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է սոցիալական շուկայական տնտեսության՝ որպես սոցիալական պետության տնտեսական հիմքի առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Հեղինակը, հիմնվելով իրավահամեմատական և տրամաբանական մեթոդների վրա, հիմնավորում է տնտեսական հարաբերությունների կարգավորման համար հայեցակարգային մոտեցման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա այդ նորմերը դիտարկել Սահմանադրության մյուս բոլոր նորմերի համատեքստում և փոխկապվածության մեջ: Այս տեսակետից հոդվածում ներկայացված են առաջարկություններ՝ ուղղված անհատի ակտիվ մասնակցությանը երկրի սոցիալ-քաղաքական կյանքին, ինչպես նաև վերջինիս իրավունքների պաշտպանությանը սեփականության սոցիալական գործառույթի իրականացման դեպքերում:

Հիմնաբառեր. Սահմանադրություն, հայեցակարգ, տնտեսություն, նորմ, մասնավորեցում, սոցիալական գործառույթ:

Ներածություն

Սոցիալական պետության կենսագործումն ինքնին չի կարող լինել արդյունավետ առանց սոցիալական նպատակների իրականացմանն ուղղված որոշակի տնտեսական բաղադրիչի, այսինքն՝ այնպիսի տնտեսական համակարգի, որը կգուգորդի իրավական պետության կողմից երաշխավորված անձնական և տնտեսական ազատությունները սոցիալական պաշտ-

պանվածության և սոցիալական արդարության հետ: Մյուլեր-Արմակի կարծիքով հասարակության ներսում տարբեր թիրախային իրավիճակներում առաջացող բախումների լուծման լավագույն ռազմավարական գաղափարը սոցիալական շուկայական տնտեսությունն է (Мюллер-Армак, 2007, էջ 44): Վերջինս, ձևավորվելով Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, 21-րդ դարի նախաշեմին դարձավ արևմտյան պետությունների գերակշռող մասի, իսկ վերջին շրջանում՝ նաև Եվրոպական միության «սոցիալական մոդելի» տնտեսական համակարգը: Այն առաջ եկավ որպես այլընտրանք համայնավարական և շուկայական տնտեսական համակարգերի և զերծ էր դրանց ծայրահեղություններից ու համադրում էր ազատականության չափն ու տնտեսության մեջ պետության միջամտության սահմանները՝ հանուն անձի ազատության, հասարակության համախմբման, անհատի և հասարակության շահերի համադրման, բոլորի և յուրաքանչյուրի բարօրության ու անվտանգության:

Հայաստանի Հանրապետությունը, ինտեգրվելով սահմանադրությունների սոցիալականացման համաշխարհային գործընթացներին, սահմանադրական բարեփոխումների արդյունքում 2015թ-ին որպես ՀՀ տնտեսական կարգի հիմք ամրագրեց սոցիալական շուկայական տնտեսությունը (հոդվ.11): Որպես նոր սահմանադրաիրավական ինստիտուտ այն ունի համալիր ուսումնասիրության անհրաժեշտություն, որն իրականացնելու կարևոր նախապայման է վերջինիս հայեցակարգային առաձնահատկությունների բացահայտումը:

Տեսական հիմքեր և մեթոդ

Ուսումնասիրությունն իրականացվել է հայրենական և արտասահմանյան (գերազանցապես՝ ռուսական) մասնագիտական գրականությունում առկա տեսակետների իրավահամեմատական մեթոդի հիման վրա: Սոցիալական շուկայական տնտեսության խնդիրների վերլուծության ընթացքում օգտագործվել են պատմական, տրամաբանական, անալիզի և սինթեզի մեթոդները:

Տնտեսակարգի սահմանադրաիրավական կարգավորման հիմունքները

Սոցիալական շուկայական տնտեսությունն անդրադառնում է իշխանության, ազատության, տնտեսական գործունակության, սեփականության և սոցիալական արդարության խնդիրներին: Ընդհանուր առմամբ տնտեսական հարաբերությունները «պահանջում են քաղաքական և տնտեսական իշխանության փոխհարաբերությունների այնպիսի համակարգ, որի պայմաններում հանրային իշխանությունը գործում է համընդհանուր շահերի իրավական շրջանակներում, իսկ սեփականությունը, անջատված լինելով իշխանությունից, ապահովում է պետության տնտեսական ներուժի

արդյունավետ աճը...Այդ իսկ պատճառով տնտեսական հարաբերությունները դառնում են սահմանադրական կարգավորման կարևոր ոլորտ, իսկ հասարակության տնտեսական զարգացումը՝ սահմանադրական խնդիր» (Бондарь, 2009, էջ 34.) :

Արևմտյան գրականությունում այդպիսի կարգավորման իրավական գործիք է «տնտեսական սահմանադրություն»¹ հայեցակարգը: Հայեցակարգի իրավական բնույթը հիմնավորվել է Ֆրայբուրգի դպրոցի հիմնադիրներից մեկի՝ Ֆ.Բյուրի աշխատություններում, իսկ սոցիալական շուկայական տնտեսության հասկացությունը կազմել է տնտեսական սահմանադրության հայեցակարգի հիմնական բաղադրամասը: Հետագայում, եվրոպական սահմանադրագետների մանրամասն ուսումնասիրությունները հնարավորություն են տվել հայեցակարգային և ինստիտուցիոնալացված մոտեցում ձևավորել իշխանության, տնտեսական հարաբերությունների և սոցիալական խնդիրների կարգավորման վերաբերյալ ազգային և վերազգային մակարդակներում:

Ներկայումս «տնտեսական սահմանադրություն»-ը նեղ, սահմանադրաիրավական իմաստով հասկացվում է որպես որոշակի փոխկապակցված սահմանադրական ինստիտուտների, սկզբունքների և նորմերի ամբողջություն (Андреева, 2011):

Մի շարք իրավագետների կարծիքով (Անդրենա Գ.Ն, Գաջին Գ.Ա, Կրավեց Ի.Ա, Կուրիլով Ա.Ե, Կուզնեցովա Լ.Յու, Մազան Ո.Դ, Ե.Տանչև և այլք) անցումային պետություններին ևս անհրաժեշտ է կարգավորումներն իրականացնել «տնտեսական սահմանադրություն» հայեցակարգի շրջանակներում: Անդրենայի դիտարկմամբ արևմուտքում տնտեսական սահմանադրության տեսությունը հանդիսանում է սահմանադրական իրավունքի ազգային գիտությունների անբաժանելի մասն ու սահմանադրության տեսության զարգացման բնական արդյունքը, իսկ տվյալ արտահայտության անսովորությունը և չձանաչելը մի շարք մասնագետների կողմից կապված է համապատասխան սահմանադրական երևույթների ուսումնասիրության զգալի փորձի բացակայության հետ (Андреева, 2016):

Արժևորելով հայեցակարգի հիմունքներն ու առավել կոնկրետ դրույթները, պետք է նշել, որ տվյալ արտահայտությունը որոշակի խառնաշփոթ է առաջացնում սահմանադրական կարգավորումների հասկացական ապարատում, քանի որ նույն հաջողությամբ կարելի է խոսել նաև աշխատանքի սահմանադրություն, սեփականության սահմանադրություն, ձեռնարկատիրության սահմանադրություն, սոցիալական սահմանադրություն և այլ հասկացությունների մասին (Чиркин, 2016, Андреева, 2016): Անդրենան կողմնակից է նաև ֆինանսական սահմանադրություն կատեգորիային (Андреева, 2016):

Այստեղ մենք կհսում ենք Վ.Ե. Չիրկինի կարծիքը, ըստ որի «պետույթ»

1 Գիտական գրականությունում շրջանառվում է նաև «սահմանադրական տնտեսագիտություն» եզրույթը, որը շրջանառության մեջ է դրել ամերիկացի տնտեսագետ, Նորբեյան մրցանակակիր Ջ.Բյուկենենը՝ ուսումնասիրելու սահմանադրական դրույթները տնտեսագիտության մեջ (Бьюкенен, 2004, էջեր 167-178):

յուններում չկա հատուկ տնտեսական սահմանադրություն...Սահմանադրություններում առկա են տնտեսական բնույթի դրույթներ, սակայն դա չի նշանակում, որ ի հայտ է եկել իրավաբանական սահմանադրության նոր տեսակ՝ տնտեսական սահմանադրություն» (Чиркин, 2016):

Մեր կարծիքով պետք է խուսափել հասկացական նման բազմազանությունից, քանի որ խոսք է գնում մեկ ամբողջական միասնական փաստաթղթի մասին, որը կոչված է կյանքի յուրաքանչյուր ոլորտում ամրագրել էական, հիմնարար նշանակություն ունեցող սկզբունքները մեկ միասնական ամբողջության և փոխադարձ կապվածության մեջ, որտեղ բացակայում են հատվածային մոտեցումները, իսկ յուրաքանչյուր կարգավորում համահունչ է այն արժեքներին ու սկզբունքներին, որոնք դրված են ազգային պետականության հիմքում և ապահովում են նրա կայունությունն ու հետագա զարգացումը: Դա հատկապես վերաբերում է իշխանություն-շուկա-հասարակություն-անհատ հարաբերություններին: **Նման իրավիճակում առավել ընդունելի ենք համարում խոսել տնտեսական կարգի սահմանադրական հիմունքների մասին, որտեղ ընտրված համակարգի հիմունքները սահմանադրության ժողովրդավարության աստիճանի ցուցիչներից մեկն են:**

Սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգի սահմանադրաիրավական առանձնահատկությունները

ԸՀ տնտեսական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորումները երկար ժամանակ չեն ենթարկվել խորքային ուսումնասիրությունների հայրենական գիտական հանրության կողմից²: Այս հարցերը հիմնականում սահմանափակվել են տվյալ հարաբերությունների ուղղակի նորմատիվ կարգավորմամբ, այնինչ առկա է խնդրի նկատմամբ հայեցակարգային մոտեցման անհրաժեշտություն: Այն կարևորվում է հատկապես սոցիալական շուկայական տնտեսության պարագայում: Սոցիալական շուկայական տնտեսության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս տնտեսական նորմերը դիտարկել սահմանադրության մյուս բոլոր նորմերի համատեքստում և փոխկապվածության մեջ: Տնտեսությանը վերաբերող սահմանադրաիրավական նորմերն ու սկզբունքները մեկնաբանել երեք տարրերի՝ մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական պետության սկզբունքների պահպանման և պետության միջամտության սահմանափակման սահմանադրական հավասարակշռության տեսանկյունից (Андреева, 2010, էջեր 9-14) : Արդյունքում ապահովվում է սոցիալական պետության տեսության կիրառումը տնտեսության ոլորտում, որի զարգացման ներկայիս առանձնահատկությունն է մարդու իրավունքների ներառվածության և բացառվածության երկկողմ հայեցակարգը: Դա

² Իհարկե՝ առկա են թեմային վերաբերող առանձին հետազոտություններ, օրինակ՝ Վարդան Այվազյան Տնտեսական համակարգի սահմանադրաիրավական կարգավորումը: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. -Եր., ԵՊՀ, 2017, 534 էջ:

հնարավորություն է տալիս ոչ միայն նորովի մեկնաբանել գործող նորմերի և սկզբունքների բովանդակությունը, այլև ձևավորել նորերը: Այսինքն՝ իրավունքով պետությունը սահմանափակելու սկզբունքի և սոցիալական հզոր բաղադրիչի խորացման հետ զուգահեռ մշակվում ու սահմանադրական ձևավորում են ստանում տնտեսական հարաբերությունների կարգավորման փոխկապակցված կառուցակարգերը, դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ սահմանադրական վերահսկողությունը (Андреева, 2011):

Սոցիալական շուկայական տնտեսության պարագայում սահմանադրության ցանկացած դրույթ դիտարկվում է ոչ թե ինքնին, այլ ձևավորված նորմերի և ինստիտուտների համակարգում: Տնտեսության նման կողմնորոշվածության պայմաններում սոցիալ-իրավական պետության բոլոր տարրերը ամուր կապերով կապվում են միմյանց հետ, յուրաքնչյուրի՝ հստակորեն որոշված տեղով, գործառնությունով և նշանակությամբ: Սահմանադրաիրավական նորմերի փոխկապակցման շնորհիվ տնտեսական բնույթի դրույթները ընդգրկվում են նաև բովանդակությամբ տարբեր (այդ թվում՝ ոչ տնտեսական) սահմանադրական նորմերի մեջ: Այս տեսանկյունից սահմանադրության նորմերը ստանում են նոր մեկնաբանում և կարգավորում:

Դիտարկենք 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 1-ին կետը, ըստ որի «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»:

Հոդվածն ուշագրավ է այն փաստով, որ շրջակա միջավայրի խնդիրները գնահատվում են ևս մեկ կարևոր դրույթի՝ կայուն զարգացման տեսանկյունից, ինչը պահանջում է մեկ միասնական հավասարակշռվածության մեջ դիտարկել բնապահպանական, տնտեսական և սոցիալական բաղադրիչները³: Դրան համապատասխան սահմանադրական այս դրույթը որոշակիորեն կազմակերպում է ոչ միայն շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ողջ սահմանադրաիրավական կարգավորումը, այլև ներադրում է տնտեսական հարաբերությունների կարգավորման, աշխատանքային պայմանների, առողջության պահպանման և այլ հարցերի վրա: Հետևաբար՝ տնտեսության նկատմամբ տվյալ սահմանադրաիրավական դրույթի կիրառումը ենթադրում է նաև սեփականության և ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումների համակարգ՝ շրջակա միջավայրի պահանջների տեսանկյունից: Դրա դրսևորումներից է սեփականության սոցիալական գործառնությունը, որին համապատասխան Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ կետն անրագրում է, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական

3 Այս բաղադրիչների միասնությունն ընդգծված է «Փոխակերպելով մեր աշխարհը. կայուն զարգացման 2030 օրակարգ» փաստաթղթում (General Assembly resolution 70/1 of 25 september 2015):

իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ելնելով ՀՀ Սահմանադրության ժողովրդավարական բնույթից, շրջակա միջավայրի սահմանադրական պաշտպանությունը հնարավորություն է տալիս նաև իրականացնել տնտեսական բնույթի ծրագրերի հասարակական այլընդրանքային փորձաքննություններ, վեճերի դեպում դիմել սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների, միջազգային կառույցների և այլն: Ժողովրդավարության սկզբունքներին համահունչ գործելը ներունակ է դարձնում նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներգրավումը, վերջիններիս մասնակցությունը տնտեսական բնույթի հարցերի որոշմանը, որտեղ շոշափվում են շրջակա միջավայրի խնդիրները: Տնտեսական գործունեությունը հայտնվում է մի շարք տարբեր ինստիտուտների (և ոչ միայն պետական) վերահսկողության ներքո:

Բայցևայնպես, կարևորելով յուրաքանչյուրի ակտիվ ներառվածությունը և հավասար մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքին, կարծում ենք, որ պետությանն անհրաժեշտ է վերը նշված հոդվածում **սահմանել անհատի կողմից իր կյանքի միջավայրին և առողջությանը վերաբերող որոշումների ընդունման վրա ազդելու սահմանադրական հնարավորություն:** Այն իր հերթին կօգնի օրենսդրական մակարդակում ընդլայնել և ինստիտուցիոնալացնել տվյալ բնագավառում որոշումների ընդունման համար ժողովրդավարական ինստիտուտների օգտագործման բնույթը (հարցումներ, հանրային, խորհրդարանական լուսմներ և այլն), հստակեցնել շրջակա միջավայրի հարցերին վերաբերող որոշումների թափանցիկությունն ապահովող սկզբունքները ու գործիքակազմը: Սահմանադրական այս մոդելն ամբողջությամբ կհիմնվի քաղաքացիական հասարակության ինստիտուտների և իրավական պետության հիմքի վրա: Հակառակ դեպքում բնապահպանական խնդիրներ ունեցող տարածաշրջաններում առկա հիմնահարցերը (լրացուցիչ ծախսեր, առողջապահական և սոցիալական տարբեր խնդիրներ) կվտանգեն տարածքների համաչափ զարգացումը, ինչպես նաև յուրաքանչյուրի համար հավասար պայմաններ և հնարավորություններ ստեղծելու սկզբունքի իրագործումը:

Ելնելով վերոշարադրյալից՝ առաջարկում ենք Սահմանադրության 12-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

1. «...»
2. Պետությունն ստեղծում է յուրաքանչյուրի համար պայմաններ և հնարավորություն՝ ազդելու իր կյանքի միջավայրին վերաբերող որոշումների ընդունման վրա:
3. ...»

Որոշակի նոր մոտեցում է սահմանում նաև կայուն զարգացման սկզբունքը: Այն օժտված է իմաստային առավել լայն բովանդակությամբ, քան սահմանված է Սահմանադրության 12-րդ հոդվածում: Այն չի սահմանափակվում զուտ բնապահպանական խնդիրներով, այլ, ինչպես նշեցինք, իրականացնում է համալիր կարգավորում: Վերջինս, ընգծելով պետության պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, սահմանում է նոր

հանրային նպատակ՝ ապագա սերունդների տնտեսական շահերի պաշտպանություն: Դրա դրսևորումներից է հիմնական բնական ռեսուրսների նկատմամբ պետական խիստ վերահսկողությունը: Այդ մասին է վկայում ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ կետը, համաձայն որի «Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են»: Այն նոր պահանջներ է ներկայացնում կառավարությանը նաև այլ ոլորտներում: Մի շարք երկրներ տվյալ պատասխանատվության շջանակներում, այն է՝ բյուջետային հարաբերություններում և ֆինանսական իրավունքում առաջ են քաշել նոր հասկացություններ՝ կայունացման կամ բարեկեցության հիմնադրամ, ապագա սերունդների հիմնադրամ⁴: Ընտրելով այս ուղին Հայաստանի Հանրապետությունը ևս պետք է ստանձնի նման պարտավորություն:

Այսպիսով, սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորումը ներկայանում է որպես բարդ համակարգ, որում ներառված են բազմաթիվ սահմանադրական ինստիտուտներ և իրավական միջոցներ, որոնք կարող են բուն սահմանադրությունում ուղղակիորեն կապված չլինել տնտեսության հետ, սակայն հաշվի առնվեն այս կամ այն դրույթի սահմանադրականության հարցի լուծման դեպքում: Այս մոդելի առավելությունը կայանում է նրանում, որ այն հիմնվում է սոցիալական և իրավական պետության ինստիտուցիոնալ լայն բազայի վրա:

Նշված դրույթները կարևոր են նաև տնտեսական հիմնախնդիրների հետ կապված օրենքների մեկնաբանման համար: Միայն այսպիսի տնտեսության կառուցողական սկզբունքների գիտակցման շնորհիվ է հնարավոր ըմբռնել առանձին օրենքների իմաստը, որոնց իրագործումն էլ իր հերթին հույժ կարևոր է սոցիալական շուկայական տնտեսություն ամրագրող սահմանադրական նորմերի գործունեության և արտադրական գործունեության կարգավորման համար: Մեր խորին համոզմամբ այս դիրքերից պետք է հատկապես մեկնաբանվեն սնանկության, տնտեսական մրցակցության, սեփականության, սեփականաշնորհման, աշխատանքային, վարչական իրավունքի և իրավական այլ ակտերի դրույթները: Նմանատիպ մտեցում պետք է դրսևորվի նաև իրավաստեղծ գործունեության ընթացքում:

Սեփականության սոցիալական գործառույթը և պետական գույքի մասնավորեցման որոշ խնդիրները

Ժամանակակից սոցիալական պետության հայեցակարգի տեսանկյունից մարդու իրավունքների վերընթերցման պայմաններում կարևոր նշանակություն է ստանում նաև սեփականության սոցիալական գործառույթը: Այս հայեցակարգը սկիզբ է առնում տվիդարիզմի տեսությունից (Կոնտ, Դյուգի), ըստ որի սեփականության մեջ ամենակարևորը ոչ թե իրավունքն

⁴ Օրինակ, ՌԴ-ում Ռուսաստանի Դաշության ազգային բարեկեցության հիմնադրամ, Նորվեգիայում Պետական նախթային հիմնադրամ, որը կատարում է կայունացման հիմնադրամի և ապագա սերունդների հիմնադրամի դերակատարություն (Гаджиев, 2009, № 1 (38), Апрель):

է, այլ սոցիալական պարտականությունները⁵: «Դա պարտականություն է, ըստ որի սեփականության օգտագործումը պետք է միաժամանակ ծառայի բոլորի բարօրությանը: Սեփականատերն այդպիսով պարտավոր է գույք օգտագործելիս հաշվի առնել ամբողջ հասարակությունը» (Էկլիսարտ Շտեյն)⁶: Այլ կերպ ասած՝ սեփականության սահմանափակումն իրականացվում է «արդար սոցիալական հարաբերություններ սահմանելու», «ընդհանուրի բարորությունն ապահովելու» նպատակով՝ «արդարացված հասարակական օգուտով կամ սոցիալական շահերով», «հասարակական օգուտի հիմնավորումներով»:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության 1949թ. Սահմանադրության 14-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն «Սեփականությունը պարտավորեցնում է: Դրա օգտագործումը պետք է միաժամանակ ծառայի ընդհանուրի բարօրությանը»: Ըստ ԳԴՀ Սահմանադրական դատարանի՝ այս դրույթը նշանակում է «մերժել այդպիսի սեփականության համակարգը, որի դեպքում անհատական շահը անվերապահ առավելություն ունի հասարակության շահերի նկատմամբ» (Bundesverfassungsgericht. Entscheidungen, 21, s. 73)⁷: Բացի այդ, վերջին տասնամյակներում սեփականության սոցիալական գործառույթը ճանաչվում է նաև որպես գործառույթ «ուղղված մարդկության բարգավաճման նպատակի ապահովմանը»: ԱՄՆ-ի Նյու Ջերսիի Գերագույն դատարանն այսպես է ձևակերպել այդ միտքը՝ մարդու առողջության, բարեկեցության և արժանապատվության ամրապնդման համար (State v. Shack, 277 A.2d 369, 372 (N.J. 1971)): «Մարդկության բարգավաճում»-ը որպես սեփականության սոցիալական գործառույթի այժմեական նպատակ ձգտում է գտնել լուծումներ մեր ժամանակներին բնորոշ աղքատության և անհավասարության (սոցիալական, տնտեսական, բնապահպանական) խնդիրների համար (Colin Crawford, 2011, էջ 1091):

Սեփականության իրավունքի սոցիալական պարտավորություններով ծանրաբեռնված լինելը հատկապես կարևորվում է պետական գույքի մասնավորեցման դեպքում: Մասնագիտական գրականությունում առանձնացնում են դոկտրինալ (գիտական) և իրավական մասնավորեցման հասկացությունները, որոնց ծավալը տարբերվում է ըստ օբյեկտի (Приватизация и право, 2012., էջ 34): Դոկտրինալ մասնավորեցման դեպքում տեղի է ունենում գործառույթների սեփականաշտրհում (functional privatization), քանի որ այս դեպքում օբյեկտը պետական գործառույթներն են՝ իրավասությունները: Այս տեսակետից պետությունն ունի հիմնական, այսպես կոչված՝ դասական գործառույթներ, որոնք անհնար է մասնավորեցնել և սոցիալական պետության գործառույթներ, որոնք ժամանակին պետությունն իր վրա էր վերցրել, քանի որ մասնավոր հատվածը չէր կարողանում բավարար մակարդակով ապահովել դրանց իրացումը, բայց որի կենսագործումը նա (մասնավոր հատվածը) արդեն կարող է հաղթահարել: Այսպես՝ XX-րդ դա-

5 Դյուգիի խոսքերով «Սեփականությունն իրավունք չէ, սեփականությունը սոցիալական գործառույթ է»: Մեջբերումն արվում է ըստ Foster, Sheila and Bonilla, Daniel (November 15, 2011).

6 Մեջբերումն արվում է ըստ Лазар, 1985, էջ 47.

7 Մեջբերումն արվում է ըստ Лазар, 1985, էջ 47.

րի միջպատերազմյան տարիներին ձևավորվեց «պետություն-ձեռներեց» հայեցակարգը, ըստ որի պետությունն իր վրա էր վերցնում համապատասխան գործառույթներ, որոնք ժամանակի ընթացքում սկսեցին փոխանցվել մասնավոր հատվածին՝ ձևավորելով պետություն-մասնավոր հատված համագործակցությունը: Արդի սոցիալական պետություններում մասնավորեցումն իրականացվում է այն տեսանկյունից, թե որքանով է մասնավոր հատվածը կարողանում իրագործել սոցիալական պաշպանվածության և սոցիալական ծառայությունների բավարար մակարդակի ապահովումը, որն ի սկզբանե իրականացնում կամ պետք է իրականացնե՞ր պետությունը (Maurer, 2009. N XVI): Դա նշանակում է, որ մասնավորեցումը ներկայանում է որպես պետության կողմից պատվիրակվող պետական գործերի (հանրային լիազորությունների) կատարում (Metzger, 2003, էջ 1367), որոնք անհրաժեշտ է իրականացնել միայն այն դեպքում, երբ պահպանվում է համապատասխան սոցիալական գործառույթի իրականացման հիմնական պահանջը:

Իրավական մասնավորեցման դեպքում՝ մասնավորեցվող օբյեկտը սեփականության իրավունք է (proprietary privatization): Սակայն այս պարագայում մասնավորեցվող գույքի սոցիալական գործառույթը չպետք է դիտարկել որպես գույքն ուղղակի մասնավորին (նաև անհատին) զիջում՝ առանց սեփականության իրավունքի սուբյեկտին որոշակի ծանրաբեռնվածություն վերապահելու: Ընդհակառակը՝ սոցիալական գործառույթի հայեցակարգը պետք է պարտավորեցնի սեփականատիրոջն օբյեկտներն օգտագործել ըստ հանրության համար դրանց նշանակության աստիճանի, այսինքն՝ գույքն օգտագործել ըստ նպատակային նշանակության, չոչնչացնել, հոգ տանել դրա պահպանության, վերականգնման մասին (օրինակ՝ հողի, պատմական, ազգային և մշակութային արժեքներ ներկայացնող սեփականության):

Գործնականում այս խնդիրը կարելի է վերլուծել օրենսդրական ակտերի օրինակով: «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է պետական բաժնեմաս ունեցող թվով 47 ընկերությունների, այդ թվում՝ առողջապահության ոլորտի պետական մասնակցությամբ մի շարք ընկերությունների մասնավորեցում: Ըստ այդմ, օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ նշված առողջապահական ընկերությունների մասնավորեցումը չի կարող հանգեցնել այդ ընկերությունների գործունեության հիմնական ուղղության կամ հանրային նշանակության փոփոխությանը կամ որևէ կերպ նվազեցնել դրանց գործունեության հանրային օգտակարությունը (այդ թվում՝ մատուցվող բժշկական ծառայությունների որակի և մրցունակության ապահովման առումով): Սակայն, հասկանալի չէ մասնավորեցվող մյուս օբյեկտների ձակատագիրը: Արդյո՞ք կարելի է փոփոխել մյուս մասնավորեցվող օբյեկտների, օրինակ՝ Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայի, Հրազդան մարզահամալիրի, «Հայփոստ»-ի, Արտակարգ իրավիճակների օդանավակայանի և մյուսների գործունեության հիմնական ուղղություններ:

րը և նշանակությունը կամ արդյո՞ք մասնավորեցվող գույքի նոր սեփականատերերը չունեն պարտավորություն օբյեկտներն օգտագործել ըստ նրանց հանրության համար նշանակություն ներկայացնելու աստիճանի:

Հարցադրումներից պարզ է դառնում, որ հայեցակարգային մոտեցումը պետք է պարտավորեցնի օրենսդրին **պետական գույքի մասնավորեցման դեպքում սահմանել յուրաքանչյուր օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի նոր սուբյեկտի՝ գույքն ըստ նպատակային նշանակության օգտագործելու վերաբերյալ համապատասխան սոցիալական պատասխանատվության անհրաժեշտությունը, չափն ու տեսակը: Դա կնպաստի սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքներից մեկի՝ սուբսիդիարության սկզբունքի արդյունավետությանը, համաձայն որի պետությունը չպետք է կատարի այն տնտեսական գործառույթները, որոնք հաջողությամբ իրականացնում են ֆիզիկական և իրավաբանական անձինք: Բացի այդ, մասնավորեցումը չի խախտի մարդու իրավունքները և չի նվազեցնի բնակչության կյանքի մակարդակը:**

Վերոշարադրյալի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ պետական գույքի մասնավորեցման անհրաժեշտությունը, դրա ձևերի և մեթոդների վերաբերյալ հանրային համաձայնության հարցերի լուծումը պահանջում են սեփականաշնորհման գործընթացում ժողովրդավարական ընթացակարգերի օգտագործում: Դրանց թվում են՝ հասարակության և լրատվամիջոցների կողմից մասնավորեցման հարցերի լայն քննարկումը, այլընտրանքային նախագծերի առաջադրման և քննարկման հնարավորությունը, պետական մարմինների և հասարակության կողմից առաջարկվող մասնավորեցման տարբերակների անկախ քննությունը, խորհրդարանում բաց քննարկումները, դատական կարգով բողոքարկման հնարավորությունը և այլն: Հասարակության անդամները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալու պետական մարմինների, այլընտրանքային նախագծերի կողմից սեփականաշնորհման որոշումների բոլոր տեսանկյուններին, այդ թվում՝ գնահատելու հասարակության կողմից մասնավորեցման հնարավոր հետևանքները՝ ապահովելով մասնավորեցման սահմանադրականությունը: Այս առումով առաջարկում ենք նաև Սահմանադրության 198-րդ հոդվածում Հաշվեքննիչ պալատի լիազորությունների մեջ նախատեսել հաշվեքննություն ոչ միայն սեփականության օգտագործման, այլ նաև **պետական գույքի սեփականաշնորհման** օրինականության և արդյունավետության նկատմամբ (հոդվ.198):

Սեփականության սոցիալական գործառույթի տեսանկյունից որոշակի հարցեր են առաջանում նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դեպքերում: Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ կետի և «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության մասին» օրինքի 11-րդ հոդվածի 1-ին կետի՝ օտարվող սեփականության դիմաց տրվում է նախնական և համարժեք փոխհատուցում: Մարդու իրավունքների եվրոա-

կան դատարանը «Գլադիշևան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործում (N 7097/10, 06.10.2011) նշել է, որ սեփականության ցանկացած միջամտություն պետք է ոչ միայն լինի օրինական և ունենա օրինական նպատակ, այլև բավարարի համաչափության պահանջը: Անհրաժեշտ է սահմանել արդար հավասարակշռություն հասարակության ընդհանուր շահերից բխող կարիքների և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Սակայն, անհրաժեշտ հավասարակշռություն չի կարող լինի, եթե շահագրգիռ կողմը կրի անհատական և անհարկի բեռ: Դա նշանակում է, որ պետությունը հանրության գերակա շահը որոշելիս պետք է առաջնորդվի այն սկզբունքով, որ սեփականության օտարումը սեփականատիրոջը չպետք է պատճառի չհիմնավորված վնաս, իսկ օտարվող սեփականության դիմաց պետք է վճարվի համարժեք փոխհատուցում: ՀՀ օրենսդրությամբ համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական գնից 15% ավելի փոխհատուցումը: Այնուամենայնիվ, փոխհատուցման չափը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ՝ ուղղված իրավունքների պաշտպանությանը, հատկապես այն դեպքերում, երբ տվյալ գույքը հանդիսանում է գոյատևման, եկամտի միակ աղբյուրը: Օրինակ՝ գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն օգուտները, որոնք սեփականատերը ստանում էր հողն օգտագործելու արդյունքում, այլև այն բացասական հետևանքները, որոնք կարող են առաջանալ եկամտի կորստի արդյունքում: Հարցն այն է, որ սեփականատերը կորցնում է ոչ միայն իր հողամասը, այլև ապրուստի միջոցն ու որոշակի բարեկեցությունը: Նմանատիպ խնդիրներ են առաջանում նաև քաղաքային բնակավայրերում բնակարանների օտարման դեռքերում: Այս պարագայում հարցն այն է, թե ինչ ենթակառուցվածքներից էր օգտվում սեփականատերը և որքանով էր բավարարված նրա կյանքը: Արդյոք անձը փոխելով իր բնականոն կյանքը ստիպված չի լինում կրկնապատկել իր ծախսերը նյութականի ու ժամանակի առումով:

Նշված խնդիրները գտնվում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ուշադրության կենտրոնում: Այսպես, Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի գործով (N 71306/11, 11.10.2018) եվրոպական դատարանը արձանագրել է, որ, կիրառելով անշարժ գույքի գնահատման համեմատական մեթոդը, փորձագետները որոշել են դրա շուկայական արժեքը՝ ելնելով նույն շրջանում այլ հողատարածքների վաճառքի գներից: Դատարանը նշել է, որ այդ պայմաններում չպետք էր բացառել, որ դիմումատուներն ամենայն հավանականությամբ կկանգնեին այլ շրջանում համարժեք հողատարածք ձեռք բերելու լուրջ դժվարությունների առջև, գուցե և իրենց տրված փոխհատուցման գումարի սահմաններում ընդհանրապես չկարողանային հողակտոր ձեռք բերել այլ տարածքում: Դատարանը նաև արձանագրել է, որ նույնիսկ օրենքով նախատեսված շուկայական արժեքի գումարին հավելվող գումարի տրամադրման պարագայում այդպիսի փոխհատուցումը կարող է դիտվել ոչ համարժեք, եթե օտարվող գույքը հանդիսացել է անձի եկամուտների հիմնական, եթե ոչ միակ աղբյուրը: Ուստի,

դատարանը եկել է եզրահանգման, որ անձանց տրվել է ոչ համարժեք փոխհատուցում:

Ալիխանյանն ու Մելիքսեյանն ընդդեմ Հայաստանի գործով (N 4168/10, 14.03.2019) Եվրոպական դատարանը նշել է, որ ներպետական դատարանները չեն դիտարկել այն հարցը, թե, արդյո՞ք, տրամադրվող փոխհատուցումը կծածկի դիմումատուների՝ ապրուստը հոգալու միջոցներից գրկվելու հետ կապված փաստացի կորուստը կամ, արդյո՞ք, այն բավարար կլինի, որ նրանք համարժեք հող ձեռք բերեն այն տարածքում, որտեղ ապրում են:

Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ գույքի օտարման դեռույժ փոխհատուցման պայմանները ենթակա են գնահատման այն առումով, թե, արդյո՞ք, այդ միջոցառումները պահպանե՞լ են անհրաժեշտ արդար հավասարակշռությունը և, արդյո՞ք, այն համաչափ բեռ է դնում սեփականատիրոջ վրա: **Այստեղից հետևում է, որ օրենսդիրը ոչ միայն պետք է ամրագրի նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը, այլև սահմանի շուկայական արժեքի որոշման մեթոդները և գնահատման չափանիշները: Միևնույն ժամանակ այս գործընթացը պահանջում է սեփականության օտարման ժողովրդավարական ընթացակարգերի օգտագործման անհրաժեշտություն, ինչպիսիք նախանշել ենք պետական գույքի մասնավորեցման դեպքում:**

Եզրակացություն

Սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրագործումը խորացնելու նպատակով 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 11-րդ հոդվածը Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմք սահմանեց սոցիալական շուկայական տնտեսությունը: Այն իր հերթին առաջ քաշեց հայեցակարգային մոտեցման ահնրաժեշտություն, որի պարագայում տնտեսական հարաբերությունները կարգավորող նորմերը պետք է դիտարկվեն սահմանադրության մյուս բոլոր նորմերի համատեքստում և փոխկապվածության մեջ: Այս մոտեցման արդյունքում սահմանադրաիրավական նորմերն ու սկզբունքները հնարավորություն են ստանում մեկնաբանմանվելու մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական պետության սկզբունքների պահպանման և պետության միջամտության սահմանափակման սահմանադրական հավասարակշռության տեսանկյունից: Հայեցակարգային մոտեցումը կարևորում է նաև յուրաքանչյուրի ակտիվ ներառվածությունը և հավասար մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Այս տեսակետից հեղինակն առաջարկում է շրջակա միջավայրի պահպանության հարցերում անհատին տալ սահմանադրական հնարավորություն՝ ազդելու իր կյանքի միջավայրին և առողջությանը վերաբերող որոշումների ընդունման վրա: Մեկ այլ դեպքում ժողովրդավարական ընթացակարգերի օգտագործումը հնարավորություն կտա մարդկանց ակտիվորեն մասնակցել պետական գույքի մասնավորեցման գործընթացների, ձևերի և մեթոդների վերաբերյալ հանրային համաձայնության հարցերի լուծմանը:

Սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգը առաջադրում է նաև սահմանադրական սկզբունքներ՝ ուղղված տնտեսության բնագավառում սոցիալական պետության, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց տնտեսական գործունեությանը⁸:

Օգտագործված գրականության ցանկ

- Այվազյան, Վ. (2017) *Տնտեսական համակարգի սահմանադրաիրավական կարգավորումը*: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ. Ա. Ղազինյան. -Եր., ԵՊՀ:
- Զոմարոյան, Ն. (2017) *Սոցիալական պետության ձևավորումն ու զարգացումը* // Բանբեր ԵՄՀ, № 2, էջեր 28-39:
- Այլիսանյանը և Մելիքսեթյանն ընդդեմ Հայաստանի*, N 4168/10, 14.03.2019
- Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի*, N 71306/11, 11.10.2018
- Андреева Г.Н., (2010) *К вопросу о понятии экономической конституции*// Конституционное и муниципальное право. Издательство:Издательская группа «Юрист»(Москва), № 7, էջեր 9-14.
- Андреева Г.Н., (2016) *Размышления об особенностях становления российской теории конституционного регулирования экономических отношений*. <http://xn---7sbbaj7auwnffhk.xn--plai/article/18994> (մուտք 11.09.2020)
- Андреева Г.Н. (2011). *Социально ориентированная рыночная модель экономической конституции: постановка проблемы*. https://www.hse.ru/data/2012/05/21/1253500065/Andreeva_GN_2011.pdf (մուտք 11.09.2020)
- Бём Ф., Ойкен В., Гроссман-Дёрт Г., (2007). *Наша задача (Ордо-манифест)*// Социальное рыночное хозяйство: концепция, практический опыт и перспективы применения в России. Под общей редакцией проф. Р.М. Нуреева. Издательский дом ГУ-ВШЭ, Москва.
- Бондарь, Н. С. (2009). *Экономическое развитие общества и конституционное правосудие (в контексте решений Конституционного Суда РФ)*. Материалы международной научно-практической конференции « Законодательное обеспечение экономической политики государства и юридическое образование».(Донецк-Святогорск, 16-17 апр. 2009)Восток.
- Бьюкенен, Дж. (2004). *Конституциональная экономическая теория* // Экономическая теория / Под ред. Дж. Итуэлла и др. М.: Инфра-М. С. 167—178.
- Гаджиев, Г.А. (2009). *Конституция как правовая основа современной экономики*//»Недвижимость и инвестиции. Правовое регулирование».Номер 1 (38), Апрель.
- Лазар Я. Собственность в буржуазной правовой теории. М., 1985.
- Мюллер-Армак, А. (2007). *Принципы социального рыночного хозяйства*. В кн. Социальное рыночное хозяйство: концепция, практический опыт и

⁸ Սկզբունքների վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ Ն.Զոմարոյան *Սոցիալական պետության ձևավորումն ու զարգացումը*// Բանբեր ԵՄՀ, № 2, 2017, էջեր 28-39:

перспективы применения в России. М.

Приватизация и право: Учебное пособие /под ред. А. Н. Козырина. (2012). М.: НИУ ВШЭ.

Чиркин В.Е., (2016). О терминах «экономическая конституция» и «конституционная экономика», а также о российской и западной науке (отклик на статью Г.Н. Андреевой); <http://xn----7sbbaj7auwnffhk.xn--plai/article/21429> (ւնւոք 11.09.2020).

Гладышева против Российской Федерации, N 7097/10, 06.10.2011.

Maurer, H. (2009) *Die verfassungsrechtlichen Grenzen der Privatisierung in Deutschland* // *Juridica international*. Tartu, N XVI. <http://www.juridicainternational.eu/index/2009/vol-xiv-2/die-verfassungsrechtlichen-grenzen-der-privatisierung-in-deutschland-gliederungsübersicht> (ւնւոք 11.09.2020)

Colin Crawford, (2011). *The Social Function of Property and the Human Capacity to Flourish*, 80 *Fordham L. Rev.* 1089. Available at: <https://ir.lawnet.fordham.edu/flr/vol80/iss3/5> (ւնւոք 11.09.2020).

Foster, Sheila and Bonilla, Daniel, *The Social Function of Property: A Comparative Law Perspective* (November 15, 2011). *Fordham Law Review*, Vol. 80, p. 101, 2011, *Fordham Law Legal Studies Research Paper No. 1960022*, Available at SSRN:<https://ssrn.com/abstract=1960022> (ւնւոք 11.09.2020).

Metzger, Cf. G. (2003). *Privatization as Delegation*. *Columbia Law Review*.

State v. Shack, 277 A.2d 369, 372 (N.J. 1971).

Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development. General Assembly resolution 70/1 of 25 September 2015

References

Ayvazyan, V. (2017). *Tntesanan hamakargi sahmanadriravakan kargavorumy*: [The Constitutional-Legal Regulation of Economic system] YePH iravagitut'yan fakulteti profesoradasakhosakan kazmi gitazhoghovi nyut'eri zhoghovatsu/ YePH; Glkh. khmb. G. S. Ghazinyan. –Yer., YePH. (In Arm.)

Jomardyan, N. (2017). *Sots'ialakan petut'yan dzevavorumn u zargats'umy* [The Emergence and Development of Social State] // *Banber YeMH*, № 2, eger 28-39. (In Arm.)

Alighanyany yev Meliqsetyann ynddem Hayastani [Alikhanyan and Meliksetyan v. Armenia] N 4168/10, 14.03.2019. (In Arm.)

Osmanyany yev Amiraghyann ynddem Hayastani [Osmanyany and Amiratsyan v. Armenia], N 71306/11, 11.10.2018 (In Arm.)

Andreyeva G.N., (2010) *K voprosu o ponyatii ekonomicheskoy konstitutsii* [On the question of the concept of an economic constitution] // *Konstitutsionnoye i munitsipal'noye pravo*. Izdatel'stvo: Izdatel'skaya gruppa “Yurist” (Moskva), № 7, eger 9-14. (In Rus.)

Andreeva G.N., (2016) *Razmyshleniya ob osobennostyakh stanovleniya rossiyskoy teorii konstitutsionnogo regulirovaniya ekonomicheskikh otnosheniy* [Reflections on the

- peculiarities of the formation of the Russian theory of constitutional regulation of economic relations]. <http://xn---7sbbaj7auwnffhk.xn--plai/article/18994> (accessed 11.09.2020). (In Rus.)
- Andreyeva G.N. (2011). *Sotsial'no oriyentirovannaya rynochnaya model' ekonomicheskoy konstitutsii: postanovka problem [Socially oriented market model of economic constitution: problem statemen]*. https://www.hse.ru/data/2012/05/21/1253500065/Andreeva_GN_2011.pdf (accessed 11.09.2020). (In Rus.)
- Bom F., Oyken V., Grossman–Dort G., (2007). *Nasha zadacha (Ordo-manifest) [Our task (Ordo-manifest)]// Sotsial'noye rynochnoye khozyaystvo: kontseptsiya, prakticheskii opyt i perspektivy primeneniya v Rossii Pod obshchey redaktsiyey prof. R.M. Nureyeva. Izdatel'skiy Dom GU–VSHE, Moskva. (In Rus.)*
- Bondar', N. S. (2009). *Ekonomicheskoye razvitiye obshchestva i konstitutsionnoye pravosudiye (v kontekste resheniy Konstitutsionnogo Suda RF)* [Economic development of society and constitutional justice (in the context of decisions of the Constitutional Court of the Russian Federation)]. Materialy mezhdunarodnoy nauchno–prakticheskoy konferentsii “ Zakonodatel'noye obespecheniye ekonomicheskoy politiki gosudarstva i yuridicheskoye obrazovaniye”.(Donetsk–Svyatogorsk, 16–17 apr. 2009) Vostok. (In Rus.)
- B'yukenen, Dzh. (2004). *Konstitutsional'naya ekonomicheskaya teoriya* [Constitutional economic theory] // Ekonomicheskaya teoriya / Pod red. Dzh. Ituella i dr. M.: Infra–M. S. 167—178. (In Rus.)
- Gadzhiev, G.A. (2009). *Konstitutsiya kak pravovaya osnova sovremennoy ekonomiki* [Constitution as the legal basis of modern economy]//“Nedvizhimost' i investitsii. Pravovoye regulirovaniye”.Nomer 1 (38), April'. (In Rus.)
- Lazar YA. *Sobstvennost' v burzhuaznoy pravovoy teorii* [Property in bourgeois legal theory]. M., 1985. (In Rus.)
- Myuller–Armak, A. (2007). *Printsipy sotsial'nogo rynochnogo khozyaystva* [Principles of Social Market Economy]. V kn. Sotsial'noye rynochnoye khozyaystvo: kontseptsiya, prakticheskii opyt i perspektivy primeneniya v Rossii. M. (In Rus.)
- Privatizatsiya i pravo: Uchebnoye posobiye* [Privatization and Law: Textbook] /pod red. A. N. Kozyrina. (2012). M.: NIU VSHE. (In Rus.)
- Chirkin V.Ye., (2016). *O terminakh “ekonomicheskaya konstitutsiya” i “konstitutsionnaya ekonomika”, a takzhe o rossiyskoy i zapadnoy nauke (otklik na stat'yu G.N. Andreyevoy)* [On the terms “economic constitution” and “constitutional economics”, as well as on Russian and Western science (response to the article by G.N. Andreeva)]; <http://xn---7sbbaj7auwnffhk.xn--plai/article/21429> (accessed 11.09.2020). (In Rus.)
- Gladysheva protiv Rossiyskoy Federatsii*, Gladysheva v. Russia, N 7097/10, 06.10.2011N 7097/10, 06.10.2011. (In Rus.)
- Maurer, H. (2009) *Die verfassungsrechtlichen Grenzen der Privatisierung in Deutschland* [The Constitutional Limits of Privatization in Germany]// Juridica international. Tartu, N XVI. <http://www.juridicainternational.eu/index/2009/vol-xiv-2/die-ver->

- fassungsrechtlichen-grenzen-der-privatisierung-in-deutschland-gliederungsübersicht (մուտք 11.09.2020). (In Germ.)
- Colin Crawford, (2011). *The Social Function of Property and the Human Capacity to Flourish*, 80 Fordham L. Rev. 1089. Available at: <https://ir.lawnet.fordham.edu/flr/vol80/iss3/5> (accessed 11.09.2020). (In Eng.)
- Foster, Sheila and Bonilla, Daniel, *The Social Function of Property: A Comparative Law Perspective* (November 15, 2011). Fordham Law Review, Vol. 80, p. 101, 2011, Fordham Law Legal Studies Research Paper No. 1960022, Available at SSRN:<https://ssrn.com/abstract=1960022> (accessed 11.09.2020). (In Eng.)
- Metzger, Cf. G. (2003). *Privatization as Delegation*. Columbia Law Review. (In Eng.)
- State v. Shack, 277 A.2d 369, 372 (N.J. 1971). (In Eng.)
- Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development. General Assembly resolution 70/1 of 25 September 2015 (In Eng.)

Нуне Джомардян

*Руководитель Центра международных связей и исследований
Международного университета Евразия,
заместитель заведующего юридической кафедры, соискатель кафедры
Эл.адрес: nune.jomardyan@eiu.am*

ЭКОНОМИЧЕСКАЯ ОСНОВА СОЦИАЛЬНОГО ГОСУДАРСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Статья посвящена исследованию особенностей социальной рыночной экономики как изучению особенностей экономической основы социального государства.

На основе логического и сравнительно-правового методов автор обосновывает необходимость концептуального подхода к регулированию экономических отношений, которые позволят рассматривать эти нормы в контексте и взаимосвязи со всеми остальными нормами Конституции. С этой точки зрения в статье представлены рекомендации, направленные на активное участие личности в общественно-политической жизни страны, а также рекомендации на защиту прав последних в случае осуществления общественной функции собственности.

Ключевые слова: Конституция, концепция, экономика, норма, приватизация, социальная функция.

Nune Jomardyan

Head of International Relations and Research Center,

Deputy Head of Law Department at Eurasia International University, Ph.D student

Email: nune.jomardyan@eiu.am

ECONOMIC BASIS OF SOCIAL STATE IN THE REPUBLIC OF ARMENIA

The article analyzes the features of the social market economy as the economic basis of the social state. Based on comparative legal and logical methods, the author substantiates the need for a conceptual approach to the regulation of economic relations, which will allow considering these norms in the context and interconnection with all other norms of the Constitution. From this point of view, the article presents recommendations aimed at the active participation of the individual in the socio-political life of the country, as well as protecting the rights of the latter in the implementation of the social function of property.

Key Words: Constitution, concept, economy, norm, privatization, social function.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. սեպտեմբերի 20-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. սեպտեմբերի 25-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. հոկտեմբերի 10-ին: